

ՏՐԱԿՏ

ԲԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԻՏՐԱԿԱՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉԻՒՆԻՍԻԱ ՈՒՐԲԱԹ 23 ՅՈՒՆԻՍԻ 1850

ԹԻՒ 366

ՉԻՒՆԻՍԻԱ, 23 ՅՈՒՆԻՍԻ

Այնպէս տառերորդ օրը, յորում օգոստոսի ամիսը
ԱՊՏԻԼ ՄԵՃԻՏ մեծագոր կայսրը հաճեցաւ աշ-
ցելու թեան գալու բազմաթիւ, երբեք պիտի չի-
ջնորդի բոլոր զինուորացւոց միտքէն, իսկ բարե-
բաղդ դէպքին բազմաթիւ յիշատակը ներկայ ըլլայ
պիտի միշտ համարեն բնակչաց սրտին մէջ. քանզի
ի վաղուց անտի բոլոր հասարակութիւնը կրթաւ-
ձայնի տեսնել իրենց առատագու թ կայսրը չոր-
հալի դէմքը, իւրաքանչիւրոյն սիրտը լեցուն մտե-
րիմ երախտագիտութեամբ ամենքն ալ կը ցան-
կային անձնանուէր ջերմեւանդութեւ պապոյց-
ներ տալ իրենց օգոստոսի ամիսը Բարե-
բաղին, իրենց գործադու Չորը, որ իւր կայ-
սերական այցելութեամբ կը բարեհաճէր պատ-
ուել և միտքարեւ իւր հաւատարիմ ժողովուրդ-
ները, անոնց կացութիւնը իմանալ, անոնց բարե-
կեցութիւնը ևս առաւել զարգացնել, վերջա-
պէս անոնց անդորրութիւնը ըստ ամենայն մասին
կատարեալ և հաստատուն ընել: Այս, այս օրի-
նակ շնախարհիկ մարդասիրութեան, այս օրինակ
հայրական բարերարութեւ արժանիքը իւրաքանչիւ
չիւրոք կրնայ գգալ իւր սրտին մէջ, բայց բանիւ-
բերանոյ և գրութեամբ յայտնել անտարակոյս
հնարաւոր չէ:

Վեհափառ Սուլթանը թէպէտ 8-9 ժամ
միայն մնաց իզմիր, ի վերայ այս ամենայնի բու-
ղաբիս քրեթէ ամէն գլխաւոր տեղու անքը պար-
տեցաւ, և զլուսաւոր փողոցներէն անցաւ. վերջա-
պէս կրնամք ըսել թէ խիստ քիչ մարդիկ զրկուե-
ցան անոր շնորհալի երեսոց տեսութենէն, որ
իւրաքանչիւրոյն սրտին մէջ խորին և խիստ քաղցր
տպաւորութիւն մը ըրաւ. քանզի կայսրական
պատկառելի դէմքին վրայ բացայայտ կը տես-
նուէին վսեմատի հեգութիւն մը. գործադու թ
սէր, արդարութիւն, մարդասիրութիւն և խո-
րին խոհեմութիւն: Վրեթէ ամենքը արժանի ե-
ղան տեսնելու իրենց ամենասիրելի թագաւորը,
իրենց առատագու թ իշխանը, և իրենց շնախար-
հիկ Բարերարը, ուստի իւրաքանչիւրոյն սիրտը
սկսաւ բարախել իւր ջերմեւանդ սիրոյն ազդե-

ցութենէն, ամենուն բերանը և մանաւանդ սիր-
տերը բարեմաղթութիւններ կընէին առ Վերին
Կախարհաւորութիւն, որ մեծագոր ծաղկահասակ
կայսր, մեր օգոստոսի ամիսը իր կար և բա-
րեբաղդ օրեր շնորհէ, անոր ընդ արձակ տէրութե-
կառավարութիւնը այս օրինակ իմաստուն, խորին
կենցաղագէտ և մարդասէր պաշտօնէից ձեռքը
թողու միշտ: Իսկ այս մտերիմ բարեմաղթութիւն
ները ընելու ժամանակը շատերուն սիրտը կը շար-
ժէր, աչքերն իր կրթութիւն, և ունեւոր ու բախու-
թեան արտասուք կը թափէին: Այս այսպիսի գու-
րովալի տպաւորութիւն մը ըրաւ առատագու թ
ԱՊՏԻԼ ՄԵՃԻՏ մեծագոր Սուլթանին ներկայու-
թիւնը բոլոր հասարակութեւ մէջ առանց տար-
բերութեան կրօնի, քանզի միևնոյն օրհնութիւնը
միևնոյն բարեմաղթութիւն կը լսուէր Տաճկաց,
Հայաց, Յունաց և Հրեայ բերնէն. ծերք և տը-
ղայք, արք և կանայք ամէն ազգէ զանազան լեզ-
ուաւ օրհնութիւններ կերգէին: Վերջապէս
կրնամք հաստատել թէ երբեք թագաւոր կայսր
մը այս օրինակ ջերմեւանդ և ինքնայոյժար յայ-
տարարութիւններ և մտերիմ բարեմաղթութիւն
ներ չեն կարաւ իւր հպատակներէն:

Օտարահասակ առատագու թ Սուլթանին վե-
հափալ սիրտը բազմիցս շարժեցաւ իւր հաւա-
տարիմ հպատակաց ցնծութիւնը, ջերմեւանդութե-
ան ցոյցերը և բարօրութիւն տեսնելով: Աւստի
իրաւապէս ամայս տառնեցորդ օրը ցնծալի տո-
նախմբութեան և երջանկութեան օր մը եղաւ
բոլոր Օսմանացւոց համար. և որուն յիշատակը
անջնջ լի մնայ պիտի իւրաքանչիւրոյն սրտին մէջ:
Վերջապէս թէրթոմիս ըսինք թէ քաղաքիս
բոլոր հիւպատոսները պատիւ ունեցան ներկայա-
նալու օգոստոսի ամիսը կայսր, որ մարդասիրաբար
ընկալաւ զանոնք: Հիւպատոսաց խումբը իրենց
մէջ գտնուած ծերագուներն, այսինքն շրջանային
ընդհանուր հիւպատոս և տպաւոր մօտիւ յաջորդ
Վանքի նկարին ձեռքը հետեւալ բարեմաղթական
թուղթը յանձնեց վեհափառ Սուլթանին:

Օգոստոսի 8-րդ

Իզմիրի հիւպատոսաց խումբին մէջ երկացոյնք ըլլալով, իմ
պատուելի պաշտօնակիցներս յանձնեցին ինձ զգլխաւոր պատիւը
Չորս Վեհափառութեան տոնից առջև մատուցանելու մեր ամա-

ճական յարգանքը և մեր խոնարհ ինքնակցութիւնը Չորս բարե-
բաղդ գործունէն լիցա Չորս հաւատարիմ իզմիր քաղաքը:

Երեսփոխան ըլլալով մեք եւրոպական վաճառականութեանը,
որ կընդունի այս նաւահանգստիս մէջ հիւրասիրութիւն մը արժա-
նի բարեկամութեան որ կը միաւորէ զՎեհափառութիւն Չորս մեր
օգոստոսի ամիսը իրենց տեսնելու հետ, և կը ցանկանայ ամեն
զնաբիւրոսութիւնը յայտ առնելու Չորս Վեհափառութեանը գնա-
ւանդիս երախտագիտութեան և սրանցման իզմիր բոլոր եւ-
րոպացւոց, որ ունին Չորս օգոստոսի ամիսին հաճար:

Արեւմտեմաղթութեւ օր երկար և երջանիկ ըլլան Չորս թագաւոր-
ութեան օրերը, և Չորս հայրական և լուսաւորեալ կառավարու-
թիւնը ներքև ի գործ դրուին Չորս ժողովուրդը անկալութիւնները
և մեր սրտին ուստի, որ կընեմք օրպէսլի բարեկամական, առեւ-
տարական, և նաւարկութեան կապակցութիւնները օր-քան զօր ևս
առաւել միաւորեն Արեւելքը Արեւմուտքին հետ:

Աւստի մնասիրական և ազգասիրական ընկերու-
թիւնները՝ որոյ նպատակը ազգին բարոյական և
ուսումնական յառաջադիմութեանը նպաստամա-
տոյց ըլլալ է, անտարակոյս գովութեան և բա-
ջակցութեան արժանի են: Այս օրինակ բարե-
նպատակ միաբանութիւններէն մէկն է նաև Վե-
հափառ Վերին-Թիւրք, որ 1849ին Փարիզի մէջ
հաստատուեցաւ ուսումնաշնչ և յարգոյ հա-
կազուն երիտասարդներէ, և որուն յայտարա-
րութիւնը մեր ընթերցողները կը տեսնեն առաջի-
կայ թերթիս Բանասիրականին մէջ:

Թէպէտ մինչև ցայսօր մեր ազգին մէջ գա-
նազան տեղու անք հաստատեալ ընկերութիւննե-
րը միևնոյն եռանդեամբ և յարատեւ ջանքով չի-
յառաջացան՝ ինչպէս կը պարտաւորէին և ինչպէս
կը յուսացուէր, և այս բանը թէպէտ շատերուն
եռանդը և նպատաւատոյց ըլլալով՝ բազմանք
ցրտացուց. բայց և այնպէս յիշեալ ընկերու-
թիւններն ևս զիրենք պաշտպանելու համար շատ
օրինաւոր իրաւունքներ կրնան յառաջ բերել:
Դիմաւորութիւններ, թէ որքան արգելք, որչափ
գովարտութիւններ, կը համարձակիմք ըսելու
որչափ ալ զրպարտութիւններ ունեցան ի սկզբան
որ բնականապէս իրենց յառաջադիմութիւնը մե-
ծապէս կուշացնեն: Երկրորդ յայտնի է որ այս
օրինակ ընկերութեանց կանոնաւոր յառաջադի-
մութիւնը երկար ժամանակի և փորձառութե-
կարօտ է, և ինչպէս ոտքի ելած երեսայ մը որ

ԲԱՆԱԲԱՆԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՌՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Արարատեան Բանասիրական նպատակն է Հայ
ազգին յառաջադիմութեւ և պիտոյիցը ծառայել,
անոր կարօտութեանց մէկուն համարել: Իսկ բանին
համար իրեն որոշ նպատակ գեւ չի հաստատուիր,
այլ հիմա իր անդամներուն մեծագոյն մասին հա-
ւանութեամբ որոշած է իր ունեցած և ունենա-
լու ստորին գումարը Վերադարձի տպահով գրամա-
տանց մէկուն մէջ դնել մինչև որ հարիւր հազար
Ֆրանքի գրամագլխի ունենայ, մինչև այն կէտին
չկարենալով դադար ոչ գլխուն և ոչ շահին:

Երբ այս 100-000 Ֆրանքի գումարը լեցուի,
ան ատեն իր բոլոր անդամաց մեծագոյն մասին
հաւանութեամբ պիտի ընտրէ ընկերութիւնը
իւր որոշ նպատակը:

Վեհափառ ամեն ընկերութիւնը իր ծախքը
և իր ժողոված ստակը, և ան ստորին ճիշդ հաշիւը
պիտի տալ ամէն տարի ազգային օրագրաց մէջ:

Արարատեան Բանասիրական կրօնական և բա-
ղաբական նպատակ բնաւ չպիտի ունենայ:

Արարատեան Բանասիրական ժողովքով ընտ-

րած է նախագահ մը, ատենադպիր մը, և գուն-
ճապետ մը, որոնց պաշտօնը տարի մը միայն կը տևէ:
Ինչհանուր ժողովքը 3 ամիսը անգամ մը կը
ժողովի իր գործը իմանալու և ընելու համար:
Նախագահ, ատենադպիր և գանձապետ, ա-
միսը անգամ մը պարտաւոր են ժողովք մը ընել
ու՝ ընկերութեւ գործը վրայ խորհրդակցելու:
Իրենց ժողովքին ամէն անգամ կրնայ ներկայ
գտնուիլ և խօսիլ առանց բուէ ունենալու: Ինչ-
կերութիւն իրենց ատենադպրութիւնը կը պահանջէ:
Ար հայտնակ քաղաքը որ մեծագոյն մաս մը
կը կազմուի Արարատեան Բանասիրական անդամ
ներու, հոն կը փոխադրուի խորհրդարանը, որ
կընտրէ իրեն նախագահ մը, ատենադպիր մը և
գանձապետ մը, և անկից վերջը նոյն խորհրդա-
րանը կը ընտրէ իրեն գործակալ մը ի Փարիզ ինչպէս
ուրիշ քաղաքներ:

Բանասիրական ստորին երաշխաւոր են և պիտի
տախտանաւոր գանձապետին պէս նախագահն
ալ և ատենադպիրն ալ:

Բանասիրական թեմին 10 զուրու շէ, ամա-
կան մէկ բաժինը 5 զուրու շէ: Բանասիրական ան-
գամ մը որ հրաժարի ընկերութեանէն՝ չկրնար
արհանջել իր ստակը:

Օտարական քաղաքներ գտնուող գործակալք

պիտի ունենան վկայական ընկերութեան կնքով
և խորհրդարանին անդամաց ստորագրութեամբ
որուն զօրութեամբ կարենան ընկերութեան
խորհրդարանը ներկայացնել:

Գանձապետ և գործակալք ամէն անգամ որ
ստակ կառնեն՝ պարտաւոր են մուրհակ մը տալու
ընկերութեան կնքով և իրենց ստորագրութե-
ան անդամաց որ բաժնիներին կը վճարեն:

Որոշեալ ժողովքով ի Փարիզ, 27 Մայ, 1849:

Վաղի մը ընտիր մասին սիրտը միայն կը զգայ
ազգ. բառին նշանակութիւնը, անոր միտքը միայն
կրնայ ունենալ ազնուական և վսեմ գաղափարներ
և ինքը միայն յանձն կառնէ հայրենեաց համար
յոժարութեամբ զրկանքներ կրել:

Ինչպիսի ատեն մը կապրինք որ աս խօսքերուն
ճշմարտութիւնը ուրանալու չափ տգէտ մարդիկ
չեն կրնար գտնուիլ թէ որ չարամիտ և անձնա-
պաշտ չըլլան: Արախ աչքով կը տեսնենք որ մեր
խեղճ ազգին մէջն ալ ընտիր մաս մը կայ, և բա-
րեբաղաբար շատնալու վրայ է, անոր համար
ալ նորանոր ընկերութեանց, անուններ կը լսուին
ազգային օրագրաց մէջ: Իսկ ընտիր մասին հետե-
ւահա մեր խօսքը, որ չեն ալ զարմանար թէ Արա-
րատեան ամբաւ տարածութեամբ հեռու, Վեհ.

ամէն բանէ աւելի տգիտութենէն է, որ ան
եղծ վիճակին հասած է, (Նոր համար ալ աւել
որդ է զրուցել թէ Վարստեան Նկերութե
րափաբը գլխաւորապէս ազգին գաւորաբաւ
թիւնը յառաջընելու վրայ է, Տարին աւել
է, աշխարհքիս կեդրոնը կեցած Փարիզ, իբր թէ
հայրիկ մը մէջ կրտսեննք բոլոր աշխարհք, և
ընթացըննք մէկմէկ թէ արդեօք կատարեալ
գաւորաբաւ թիւն ըլլար առ լուսաւորեալ կար
ծաւած ժողովուրդ մէջ կրկայի՞ն առ խռովութի
ւնը, առ եղբայրասպան կոտորածները, որոնց
մէնք ականատես եղանք, Սերեն երկրի մը փա
ռաւոր քաղաքները, զարմանալի մշակութիւնը,
անբաւ փառաւանդութիւնը երջանիկ չեն ընե
ր բնակիչը թէ որ արժանաւոր գաւորաբաւ
թիւն մը կրպակսի, (Նոր համար իրաւունք ունի
ան գերմանացի փիլիսոփան որ կրսէ թէ «Իսպ
րայրաբաւութեան քօղի տակը ծածկուած է մարդ
կային ազգին կատարելութիւն ու երջանկութիւն»
Իրոք ըլլայ արդեօք ան որ չայ ազգը կարե
ւոյ ունենալ ան Ֆենիւնի սկզբանց վրայ հաւ
տատեալ գաւորաբաւութիւնը ամէն տուն մէջ, և
կսի ամէն չայ իր անձին օգտակար և իր ընտան
եղբը վնասակարը մէկդի ձգել, ինչպէս նաև իր
շարքիննայ օգտակար և ընդհանուր մարդկութե

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՄՈՅ ԱՐԱՐԱՏ ԵԱՆ